

ԾԽԱԽՈՏԻ

ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՒ ԱՌՊՏԱԳՈՐԾԱԿԱՆ
ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОУЧНЫХ
Академия Наук
СССР



ՀՈՒՆՆԵՐԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՐԿԻՏԵՐԻ ԿՈՄԻՏԵՍԻ ԱՐԿԻՏԵՐԻ ԿՈՄԻՏԵՍԻ

ԵՐԵՎԱՆ 1985

633

Ծ-60

№ 4 1935 2010

35-11
1021022

ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄՍԱՏ—ՀԱՅԱՀԱՏԻԿԱՅԻՆ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ
ԵՒ Ս. ԿՈՏԻ ԽՄԲԱԿ

633
Ծ. 60

ԾԽԱԽՈՏԻ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ԵՐԶԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀՍԽՀ ՀՈՂԺՈՂԿՈՄ Վ. ՄԱՏԻԿՈՆՅԱՆԻ ԿՈՂՄԻՏԵ
1934 թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 15-ԻՆ)

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОЧНОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР



18354

14 MAY 2013

ՎՈՐՈՇՈՒՄ N: 99

ՀՍԽՀ ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՐԻԱՏԻ

15-ին դեկտեմբերի 1934 թ.

1. Հաստատել Հողօրդկոմատի Հացահատիկային վարչության կողմից մշակված ծխախոտի ազրոկանոնները 1935 թվի համար:

2. Գտնելով, Վոր ազրոկանոնների պարտադիր կիրառումը հանդիսանում է վճռական մոտենաներից մեկը բերքատվության և արտադրանքի վորակի բարձրացման գործում, առաջարկել Կոտայքի, Իջևանի, Շամշադինի, Հափանի, Ալլահվերդու, Քեչիշքենյի, Աշտարակի և Բասար-Գեչարի շրջանային հոգրածնի վարիչներին մշակել և Շրջգործկոմների նախագահութունում հաստատել տուգանքի հատուկ միջոցներ այդ կանոնները խախտողների նկատմամբ—կոլտնտեսութունների նախագահների և բրիգադիրների, առանձին կոլտնտեսականների, մենատնտեսների և Շրջհոգրածնի ու ՄՏԿ-ի առանձին աշխատավորների նկատմամբ: Շրջգործկոմների վորոշումների պատճենը ներկայացնել Հողօրդկոմատին:

3. Առաջարկել վերոհիշյալ շրջանների Շրջհոգրածիների վարիչներին, ինչպես նաև Կոտայքի, Աշտարակի և Բասար-Գեչարի ՄՏԿ-ների ղերեկատրներին անցկացնել ազրոկանոնների լայն ու մանրամասն մշակում կոլտնտեսականների և աշխատավոր մենատնտեսների շրջանում:



58360 - 64

Հողօրդկոմ՝ Վ. ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

ԾԽԱԽՈՏԻ ԱԳՐՈԿԱՆՈՆՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԾԽԱԽՈՏԱԳՈՐԾԱԿԱՆ ՇՐՋԱՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ

Առողջ և բարձրորակ բերք ստանալու համար անհրաժեշտ է կիրառել մի շարք պայմաններ և յեթե դրանցից մեկն ու մեկը չի կիրառվում, այն ժամանակ մնացած պայմանների ազդեցությունը նսեմանում է կամ բոլորովին արդյունք չի տալիս:

Այդ պայմանները համառոտ կերպով հետևյալներն են.

1. ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ.

Յեթե ընդհանուր կլիմայական պայմանները նպաստավոր են ծխախոտի աճման համար, ապա ծխախոտը հնարավոր է մշակել բոլոր տեսակի հողերում, սակայն արդյունաբերության համար պիտանի և լավորակ ծխախոտ ստանալու համար անհրաժեշտ է կատարել հողի ընտրություն:

Վորակավոր ծխախոտ ստանալու համար ամենահարմար հողերն են՝

ա) թեթև և միջակ կավաավազային հողերը՝ մանր քարերի և վորոշ չափի բուսահողի (հումուսի) խառնուրդով:

բ) թեթև կավային և ավազա-կավային հողերը, առանց խոշոր քարերի, բայց զգալի չափով բուսահողով:

գ) անտառային և սևահող-կրային հողերը:

դ) հողամասերի թեքությունը պետք է լինի հարավային, հարավ-արևելյան ուղղությամբ:

ե) հողամասերը պետք է զերծ լինեն հյուսիսային և հյուսիս-արևելյան քամիներից, ինչպես նաև հեղեղներից:

զ) ծխախոտի մշակման համար չպետք է հատկացնել չափազանց խոնավ, աղային, ավազային և ճրագախոտով վարակված հողամասերը:

Հողամասերի ընտրությունը և հատկացումը պետք է կատարվի աշնանը:

II. ՀՈՂԻ ՊԱՏՐԱՍՏՈՒՄԸ.

Աշնան հերկը պետք է կատարել 18—20 սանտիմ. խորությամբ և այդ աշխատանքները պետք է ավարտել մինչև նոյեմբերի 5-ը: Հողի փխրությունը, խոնավությունը պահպանելու

համար, ինչպես նաև դաշտը մուխոտերից զերծ պահելու նպատակով, անհրաժեշտ է աշնան հերկը վաղ գարնանը փոցխել: Փոցխել այն ժամանակ, յերբ հողամասի վերնաշերտն այնքան է չորացել, վոր փոցխն աշխատելիս հողը փշրվում է, ցեխ չի դառնում և չի կպչում փոցխի ատամներին:

Աշնան և վաղ գարնան հերկած հողամասերում, դաշտը շիթիլելուց 10—15 որ առաջ, պետք է կատարել կրկնավար և հետո միայն փոցխել. կրկնավարի խորությունը պետք է լինի վոչ պակաս 10—12 սմ., կրկնավարը կարելի է կատարել բազմախոփ գութանով:

Աշնան և գարնան հերկն անպայման գութանով պետք է կատարել:

Շատ թեք հողամասերում ցանվող ծխախոտը հեղեղի վտանգից ապահովելու նպատակով, պետք է նման հողամասերում բանալ ջրի առուներ՝ մեկը մյուսից 7—9 մետր հեռավորության վրա:

Գարնան վարի աշխատանքները պետք է ավարտել մինչև մայիսի 1-ը:

III. ՅԱՆՔԱՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԾԽԱԽՈՏԻ ՆԱԽՈՐԴՆԵՐԸ.

Ծխախոտագործական կոլտնտեսություններում պետք է անցկացնել ցանքաշրջանառություն և ծխախոտի համար հիմնականում ոգտագործել մեկ մասսիվի հողակտորները, վորոնք հանդիսանում են նպատակահարմար նախորդներ ծխախոտի համար (աշնան ցորեն, խոտաբույսեր, յեզիպտացորեն ընդեղեններ):

IV. ՊԱՐԱՐՏԱՑՈՒՄ.

Ծխախոտի ուժասպառ հողամասերը պետք է պարարտացնել հանքային կամ որգանական պարարտանյութերով:

Հանքային պարարտանյութերը պետք է շաղտալ հատուկ շարքացանով քամի չեղած որերին, կամ հակառակ դեպքում, ձեռքով հավասար չափով դաշտը շիթիլելուց 10—14 որ առաջ, վորից հետո անմիջապես փոցխել:

Նախքան պարարտանյութեր գործադրելն անհրաժեշտ է նրանցից խառնուրդ ստեղծել: Սուլֆատ ամոնիումը և սուլպերֆոսֆատն իրար հետ կարելի չե խառնել դաշտը փոխադրելուց շատ ավելի առաջ:

Սառնուրդ պարարտանյութն անհրաժեշտ է ազոտային և ֆոսֆորային պարարտանյութերի կշռված քանակությունները խնամքով խառնել իրար հետ և նախորդ մանրացնել պարարտանյութերի մեջ յեղած կոշտերը:

Մեկ հեկտարին պետք է գործադրել «սուլֆատ-ամոնիում» (20 տոկոսային) 130—150 կիլոգրամ, «սուլպերֆոսֆատ» (14 տոկոսային)՝ 260—300 կիլոգրամ և «կալիում» 90 կիլոգրամ:

Որգանական նյութերով (գոմաղբով) պարարտացնելու դեպքում մեկ հեկտարին գործադրել 20—24 տոնն:

Հանքային պարարտանյութերը, մինչև գործադրելն, անպայմանորեն պետք է պահել ծածկված շենքերում կամ ծածկոցների տակ:

V. ՇԻԹԻԼԱՆՈՑՆԵՐԸ.

1. ՀՈՂԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ.

Շիթիլանոցի համար հողամասի ընտրությունը պետք է կատարել աշնանը—մինչև նոյեմբերի 10-ը: Շիթիլի համար հատկացված հողամասը պետք է պաշտպանված լինի հեղեղներից, քամիներից և լինի լիովին արևոտ: Հողամասը պետք է լինի փխրուն և ջրաթափանցիկ, ստորերկրյա

Չուրը հողի վերնաշերտի մակերևույթից բավա-
կանին խորը լինի: Այդ հողամասը պիտի լինի
հարթավայրում, կամ հակառակ դեպքում ունե-
նա քիչ թեքութուն դեպի հարավ կամ հարավ-
արևմտյան ուղղությամբ և լրիվ չափով ապա-
հովված լինի վոռոգելի ջրով:

Շիթիլանոցի համար չպետք է հատկացնել
ծխախոտի չորանոցին մոտիկ գտնվող հողամա-
սերը, ինչպես նաև այն հողամասերը, վորոնց
վրա նախորդ տարին ծխախոտ է մշակվել:

Սառն և կիսատաք մարզերի համար հատ-
կացրած հողամասերում առաջին անգամ փորե-
լը պետք է կատարել աշնանը, իսկ ծայրահեղ
դեպքում՝ վաղ գարնանը:

2. ՇԻԹԻԼԱՆՈՑԻ ՏԻՊԸ ՅԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ.

Ամեն մի հեկտար տարածություն շիթիլելու
համար, պետք է ունենալ 75 ք. մ. տարածու-
թյուն գուտ շիթիլանոց (չհաշված մարզերի մի-
ջին տարածությունը) բաց մարզերում, կամ
չրջանակավոր ջերմոցներում՝ 42—44 ք. մ.:

Սառն մարզերի շիթիլանոցի հողամասի 2-րդ
փորելը պետք է ավարտել մինչև մարտի 5-ը,
իսկ մարզերի պատրաստումը և պարարտացումը
պետք է ավարտել ցանքից 5 որ առաջ:

Շրջանակավոր ջերմոցների համար փոսեր
փորելու և թարմ աղբով լցնելու աշխատանք-
ները պետք է կատարել մինչև փետրվարի 15-ը:

Շիթիլանոցում անհրաժեշտ է կատարել հո-
ղի և գոմաղբի ախտահանում: Այդ աշխատանք-
ները պետք է ավարտել չրջանակավոր ջերմոց-
ներում մինչև մարտի 1-ը, իսկ սառն մարզե-
րում՝ մինչև մարտի 10-ը:

Սառն մարզերի լայնությունը պիտի լինի 1
մետրից վոչ ավելի, իսկ յերկարությունը 8—14
մետր: Ջերմոցների լայնությունը 2 մետրից
վոչ ավելի, իսկ յերկարությունը՝ 8—10 մետր:

Մարզերի և ջերմոցների ուղղությունը պետք
է լինի արևելքից դեպի արևմուտք, իսկ թե-
քությունը՝ դեպի հարավ:

Շիթիլներն աճեցնելու համար սննդատու
շերտը պետք է բաղկացած լինի այն հին, փթած
գոմաղբից, վորը չի կորցրել իր սննդարար հատ-
կությունը, անտառային հողի (կամ բերրի հողի)
և ավաղի խառնուրդներից հետևյալ հարաբե-
րությամբ. գոմաղբը՝ 50 տոկոս, անտառի հող
(կամ բերրի հող)՝ 25 տոկոս և ավաղ՝ 25 տոկոս:

Շիթիլանոցի հողամասը պետք է պարար-
տացնել նաև հանքային աղերով: Մեկ քառ.
մետր տարածության համար պետք է ծախսել
ծծմբաթթվի ամոնիում (20 տոկոս) չոր դրու-

թյամբ 10 գրամ և սուպերֆոսֆատ (14 տոկ.)
7 գրամ:

Հետագայում հանքային պարարտանյութը
պետք է տալ Չրախառն վիճակում՝ Չրելու մի-
ջոցով (չիթիլի աճման ընթացքում վոչ պակաս
2 անգամից), տալով յուրաքանչյուր անգամ 1
ք. մ. տարածության համար 5 գրամ ծծմբա-
թթվի ամոնիում և 7 գրամ սուպերֆոսֆատ:

3. ՇԻԹԻԼԻ ԱՃԵՑՈՒՄՆ ՌԻ ԽՆԱՄՔԸ.

Ձերմոցներում կամ մարզերում պետք է
ցանել բացառապես տեսակավոր սերմացու, վորն
ստացվում է Ծխախոտագործական Ինստիտու-
տից:

Ձերմոցներում սերմացու պետք է ցանել
մեկ քառ. մետր տարածության վրա 0,8 գրամ,
իսկ բաց մարզերում՝ 1 գրամ: Սերմացուն նախ
քան ցանելը պետք է ախտահանել:

Սառն մարզերում վաղ ցանքը պետք է կա-
տարել մինչև մարտի 15-ը՝ չծլած սերմերով,
իսկ հետագայում ցանել ծլեցրած սերմերով:

Ցանքը կատարել հետևյալ ժամկետներին՝

Բաց և կիսատաք մարզերում մարտի 10-ից
մինչև ապրիլի 10-ը: Ձերմոցներում մարտի
1-ից մինչև 20-ը:

Հավասար ցանք ստանալու համար ծլեցրած
կամ չծլեցրած սերմերը ցանելուց առաջ ան-
հրաժեշտ է խառնել գոմաղբի հետ: Մեկ մաս
սերմին խառնել 8—10 մաս գոմաղբ:

Ցանքը պետք է հանձնարարել հմուտ մարդ-
կանց: Ցանքից առաջ և ցանելուց հետո—ան-
հրաժեշտ է մարզերը նստացնել (տրամբովկայի
յենթարկել):

Ցանքը չպետք է կատարել քամի յեղանակ-
ներին:

Շիթիլանոցի հողը, չիթիլի աճեցողության
ամբողջ շրջանում, պետք է իր մեջ պարունա-
կի նորմալ խոնավություն, վորպեսզի չիթիլը
կանոնավոր կերպով աճի:

Շիթիլանոցը պետք է Չրել ըստ պահանջի
որական 1—2 անգամ՝ առավոտյան և յերեկո-
յան:

Ցրտից, անձրևներից, կարկտից, ձյունից և
առհասարակ վատ յեղանակներից պաշտպանելու
համար ամբողջ չիթիլանոցը պետք է ծածկոց-
ներով ծածկել:

Շիթիլի կանոնավոր աճեցման համար ան-
հրաժեշտ է չիթիլանոցում 2—3 անգամ զգու-
շությամբ քաղհան անել: Քաղհանելուց առաջ
պետք է անպայման չիթիլանոցը Չրել:

Քաղհանը պետք է կատարել գլխավորապես
յերեկոյան, իսկ ամպած յեղանակներին կարելի
յե կատարել ամբողջ ողը:

4. ՇԻԹԻԼԻ ՀԱՆԵԼԸ.

Նախ քան շիթիլ հանելը պետք է ջրել շի-
թիլանոցի մարդերը: Տաք և կիսատաք ջերմոց-
ներից նախքան շիթիլ հանելը, 3—5 որ առաջ,
անհրաժեշտ է ջերմոցների շրջանակները բաց
անել, փորպետզի շիթիլներն ընտելանան ցրտին
և արևի շոգին: Բացի դրանից պետք է դադա-
րեցնել ջերմոցներ ջրելը 3—4 որ առաջ, մինչև
շիթիլի հանման ողը:

Շիթիլները պետք է հանել մեկ մեկ հատ:

Շիթիլները դաշտ պետք է փոխադրել կամ
քթոցների կամ արկղների մեջ՝ արմատները
դեպի ներս դարսած դրուժյամբ:

Շիթիլելու համար պետք է ընտրել պիտանի
և տառոջ շիթիլ, փորը պետք է ունենա փոշ
պակաս 4—5 տերև:

VI. ԴԱՇՏԵՐԻ ՇԻԹԻԼՈՒՄԸ.

1. ՇԻԹԻԼՄԱՆ ՏԵԽՆԻԿԱՆ.

Շիթիլ պետք է կատարել փոզ առափտից
մինչև ժամի 10—11-ը և յերեկոյան ժամը
5-ից, իսկ ամպ ողերին ամբողջ ողը: Որվա շոգ
ժամերին դաշտը չպետք է շիթիլել:

Նախ քան շիթիլելը, դաշտը պետք է ջրել
և ապա շիթիլել:

Շիթիլումը կատարել կեռ փայտի, ցիցի
(չիվի) միջոցով, փորը բարձրացնում է թե աշ-
խատանքի արտադրողականությունը, և թե փո-
րակը:

2. ՇԻԹԻԼՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.

Դաշտերի շիթիլումը պետք է սկսել՝

Տաք և կիսատաք ջերմոցներից մայիսի 1-ից
սկսած: Բաց (սառն) մարդերից մայիսի 10-ից
մինչև հունիսի 10-ը:

Ծանոթություն.— Դարնան բարենպաստ յեղանակներին
հարթավայր գյուղերում շիթիլումը
կարելի չե սկսել ապրիլի վերջերից:

3. ՇԻՔԻԼՄԱՆ ԽՏՈՒԹՅՈՒՆԸ.

Դաշտերը պետք է շիթիլել շարք-շարք: Խառ-
թյունը պիտի լինի «Մամսոն» տեսակի հա-
մար 60 սանտիմետր, իսկ «Տրապիզոն»-ի
համար՝ 70 սանտիմետր: Բույսը բույսից 20—25
սանտիմետր հեռու պիտի լինի:

Դաշտը շիթիլելուց հետո 5—7 որվա ընթաց-
քում պետք է կատարել վերանորոգում (չորա-
ցած շիթիլների տեղը անկել նոր շիթիլներ):

VII. ԾԽԱԽՈՏԻ ԽՆԱՄՔԸ
ՅԵՎ ՄՇԱԿՈՒՄԸ ԴԱՇՏՈՒՄ.

1. ՄԻՋՇԱՐՔԱՅԻՆ ՄՇԱԿՈՒՄԸ ՅԵՎ ՔԱՂՀԱՆԸ.

Դաշտը շիթիլելուց հետո 1—3 որվա ըն-
թացքում պետք է տալ առաջին ջուրը: Պետք
է ջրել յերեկոյան ժամերին, հակառակ դեպքում՝
վաղ առավոտյան:

Մինչև ձխախտտի հասունացումը դաշտերը
պետք է ջրել ըստ կարիքի՝ յերեկոյով տեղական
պայմաններից:

Առաջին քաղհանը, հողի փխրացումը կա-
տարել դաշտը շիթիլելուց վոչ ուշ քան 8—10
որ հետո: 2-րդ քաղհանը հողի փխրացումը և բուկ
տալը կատարել վոչ ուշ քան առաջին քաղհանից
10—12 որ հետո:

3-րդ քաղհանը և հողի փխրացումը կատա-
րել ըստ կարիքի յերկրորդ քաղհանից 12 որ
հետո:

2. ԲՋԱՏՈՒՄ ՅԵՎ ԾՍՂԿԱՏՈՒՄ.

Տերևների լավ զարգացման և վաղ հասու-
նացմանը նպաստելու նպատակով յերկու անգամ
պետք է կատարել ծաղկատում և բջատում: Բջա-
տումը պետք է կատարել ըստ բջերի զարգացման
և յերկու անգամից վոչ պակաս: Սև և ուժեղ հո-
ղերում ծաղկատումը կատարվում է ուշ, քան
ուժասպառ հողերում:

VIII. Բ Ե Ր Ք Ա Հ Ա Վ Ա Ք Ը.

1. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ.

Առաջին քաղը պետք է սկսել դաշտը շիթի-
լելուց 50—55 որ անցնելուց հետո:

Յերկրորդ քաղն սկսել առաջին քաղն ա-
վարտելուց 6—8 որ հետո:

Յերրորդ քաղը կատարել յերկրորդ քաղից
8—10 որ անց: Չորրորդը՝ յերրորդից 10—12
որ անց, իսկ հինգերորդը՝ չորրորդից 12 որ
հետո:

ВНЕШОТЕНА
ИНСТИТУТА
ВОСТРОСЛЕДЕНА
Академия наук
СССР

58360-62



2. ԲԵՐՔԱՀԱՎԱՔԻ ԱԳՐՈՏԵՆՆԻԿԱՆ.

Ծխախոտի բերքը պետք է հավաքել նրա տեխնիկական հասունացման շրջանում: Կտրահանապես արգելվում է հավաքել չհասունացած տերևները և վոչ մի դեպքում թույլ չպետք է տալ, վոր տերևները գերհասունանան:

Ծխախոտի բերքահավաքը կատարվում է հինգ անգամ, և ամեն մի քաղից հետո թելի վրա յե շարվում առանձին-առանձին, իսկ չորացնելուց հետո հավանգի յե վերածվում ու կախվում առանձին առանձին:

Անձրևից անմիջապես հետո կամ դաշտերը ջրելուց հետո, և առհասարակ, թաց տերևները չպետք է հավաքել—(քաղել):

Հասած տերևները պետք է քաղել առավոտյան ժամերին ցողն անցնելուց հետո և յերեկոյան: Ամպոտ որերին միայն ամբողջ որը կարելի յե բերքը հավաքել:

Հավաքած տերևներն արևի տակ վոչ մի դեպքում չպիտի թողնել դաշտում, այլ պետք է փոխադրել չորանոց:

Բերքը դաշտից չորանոց փոխադրելիս պետք է խնամքով վերաբերվել բերքի հետ, վորպեսզի տերևները չփչանան: Բթոցների կամ սայլի մեջ, նախ քան տերևները դարսելը, պետք է փռել վորևէ այլ բույս:

3. ԹԵՆՆՈՏԻ ԹԵՂԻՆ ՇԱՐԵԼԻ:

Նախ քան տերևները թելին շարելը, պետք է տեսակավորել ըստ մեծության, հասունացման աստիճանի և առանձնացնել վստոված ու հիվանդոտ տերևները:

Թելին պետք է շարել քաղելուց անմիջապես հետո մինչև տերևների թառամելը (տամկացումը):

Շարելու խտությունը պետք է պահպանել այնպես, վոր չորանալու ժամանակ, կամ շուտ չչորանա, կամ թե տերևների մեջ չմնան կանաչ տերևներ: Առաջին և յերկրորդ քաղերը պետք է շարել ավելի խիտ, քան մնացած քաղերը:

4. Տ Ա Մ Կ Ա Յ Ո Ւ Մ Ը.

Տամկացումը պետք է կատարել թելին շարելուց հետո, տաք յեղանակներին շրջանակների վրա՝ իսկ ցուրտ որերը՝ գետնի վրա կոթերը վերև պահելով: Տամկացման ժամանակամիջոցը պետք է տևի 1—3 որից վոչ ավելի:

Ծխախոտը տամկացնելուց առաջ գետնի վրա նախորոք պետք է փռել ծղոտ, խսիր կամ բրեզենտ և դարսված շարանների հաստությունը չպետք է լինի 1—2 շարանից ավելի:

Արագ և յեռանդուն տամկացնելու շրջա-

նում, շարանը պետք է շուռ տալ, վորպես զի տերևները չայրվեն:

Տամկացումը համարվում է ավարտված, յեթե տերևները դառնում են բաց դեղնագույն:

5. ՉՈՐԱՅՈՒՄԸ.

Տամկացած շարանները հատուկ զգուշությամբ հարկավոր է կախել չորանոցի շրջանակների վրա:

Գիշերները, քամի և անձրևային յեղանակներին, ծխախոտը շրջանակներով չպետք է թողնել դրսում, բացոթյա, այլ պետք է անպայման տեղափոխել չորանոցի ներսը:

Չորանոցի շրջանակներից չորացած ծխախոտները պետք է հավաքել և հավանգի վերածել, միմիայն տերևները լրիվ չորանալուց հետո:

Շրջանակներից ծխախոտի շարանները պետք է հավաքել առավոտները, յերբ նրանք ունեն վորոշ խոնավություն և հավանգ կապելիս չեն փշրվում:

IX. ՊԱՅՔԱՐ ԾԽԱԽՈՏԻ
ՎՆԱՍԱՏՈՒՆԵՐԻ ՅԵՎ,
ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴԵՄ.

1. ՇԻԹԻԼԱՆՈՅՈՒՄ.

Շիթիլանոցում իշախառանջ (արշուկ) յերեվալու դեպքում անհրաժեշտ է անմիջապես շիթիլանոցում մեկ սանտիմետր խորությամբ շաղտալ թունավորած նյութ (400 գրամ մկնդեղը յեփել 8 կիլոգր. շարգած յեգիպտացորենի կամ գարու հետ):

Շիթիլների հիվանդությունը կանխելու համար անհրաժեշտ է 10 որը մեկ անգամ սրսկել բորդոյան հեղուկով՝ առաջին անգամ $\frac{1}{2}$ տոկոսային, իսկ հետագայում 1 տոկոսային հեղուկով:

Շիթիլանոցում հիվանդություններ յերևալու դեպքում, հիվանդացած տեղերը շաղտալ պղնձարշապի 3 տոկոսային հեղուկ:

2. ԴԱՇՏՈՒՄ.

Այն դաշտերում, վորտեղ նկատվել են իշախառանջ կամ ազրոտիսի թրթուռ, շիթիլելուց 10 որ առաջ դաշտում պետք է թունավորած նյութ շաղտալ:

Մասնաշաղկան ձևով կարողորինի թրթուռ
յերևալու դեպքում պարտադիր կարգով պետք
է ձեռքով հավաք կազմակերպել:

Ծխախոտի դաշտում ճրագախոտ յերևալու
դեպքում անմիջապես պետք է արմատներով
հանել և այրել (չթողնել մինչև սերմի հասնելը):

Ծխախոտի լվիճի դեմ պայքարելու նպատա-
կով մեկ հեկտար տարածության համար պետք
է վերցնել 15 կիլոգրամ սապոն, լուծել 50 դույլ
ջրի մեջ և սրսկել. սապոնը կարելի յե փոխա-
րինել ծխախոտի փոշիով, վորը հարկավոր է ջրի
մեջ յեփել (7 կիլոգրամ ծխախոտի փոշի կամ
փշրանքներ յեփել 50 դույլ ջրի մեջ):

X. ԲԵՒՔԻ ՀԵՏԱԳԱ

Վ Ե Ր Ա Մ Շ Ա Կ Ո Ւ Մ Ը

Ծխախոտը նախ քան հակ կապելը պետք է
դասավորել ըստ բուսաբանական տեսակի, քաղի,
տերևների գույնի և մեծության:

Յուրաքանչյուր հակ պետք է պարունակի
իր մեջ մեկ բուսանիկական տեսակի, մեկ տե-
սակի մշակման (ջրովի կամ անջրդի), մեկ

տեսակի չորացման (կրակի կամ արեգակի), մեկ
քաղի, մեկ ապրանքային տեսակի և միատեսակ
գույնի ծխախոտ:

Ծանոթություն. — Թույլատրվում է մեկ հակում ունենալ՝

1. Տորուկ և կորուկալթի քաղերը.
2. Անաչ և պատանաչ քաղերը:

Մեկ հակում հիմնական ապրանքային տե-
սակից (1—2 տեսակի) պետք է լինի 85
տոկոսից վոչ պակաս, իսկ բարձր տեսակից՝ 15 տո-
կոսից վոչ ավելի: Հիշյալ 15 տոկոսը թույլա-
տրվում է ունենալ վոչ թե ամբողջ շարան-
ներով, այլ առանձին տերևներով՝ շարանների
մեջ:

Յերրորդ տեսակի ծխախոտի հակերի մեջ
չպետք է լինի ցածր 4-րդ կամ բրակ տեսակից:
Հակի վերածված ծխախոտները պետք է
հանձնել մթերման կայաններին պլանով նա-
խատեսված ժամկետներին:



Կաղճեցին՝ Գր. Աղամալյան, Գ. Թանգյան

Պատ. խմբակի՝ Խաչատրյան
Տեխ. խմբակի՝ Սարգսյան

Վոճաբան՝ Արթ. Գրիգորյան
Սրբազրիչ՝ Ի. Տ. Մովսիսյան

Թույլատրված է, գրավիճակի լիազոր № 624.

Հանձնված է արտադրության 1934 թվի դեկտեմբերի 19-ին

Ստորագրված է տպագրելու 1934 թվի դեկտեմբերի 20-ին

ձրատ. № 156

Տիրամ 2000

Պատվեր № 739

ՅԵՐԵՎԱՆ, ԳՅՈՒՂՀՐԱՏԻ ՏՄԱՐԱՆ, ՆԱԼԲԱՆԴՅԱՆ 50

« Ազգային գրադարան



NL0280459

18 354

2 1 1

8007

1
2



ԱԳՐՈՔՐԱՎԻԼԱ
ՍՕ ԽԱԲԱԿՍ

ԴՅԱ ԽԱԲԱԿՈՎԴԿԵՏԻԿԻ ՐԱՅՈՆՈՎ ՏՏՐ ԱՐՄԵՆԻԻ
(ՆԱ ԱՐՄՅԱՆՏԿՈՄ ԿՅ.)